ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Եղեգնավան համայնք, փ. Ա. Խանջյան, 20, հեռ. /0234/ 62646, էլ. փոստ hovsep59@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2011 թվականի N 11-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ և ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ „Տեղական տուրքերի և վճարների մասին" և „Տեղական ինքնակառավարման մասին" օրենքներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ,

բ/ սույն կետի „ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ,

բբ/ 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ,

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70.000 դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 դրամ,

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3.000 դրամ,

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի „ա" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5.000 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ ոգելից խմիչքների վաճառքի /իրացման/ թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5.000 դրամ,

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի /իրացման/ թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5.000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ,

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է.

ա/ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1.000 դրամ,

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2.500 դրամ,

գ/ այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ,

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանվում է 3.000 դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 10.000 դրամ:

9. Համայնքի տարածքում բոլոր տեսակի աճուրդ-վաճառքների, մրցույթների մասնակցության համար տեղական վճար սահմանել 5.000 դրամ:

10. Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մինչև 1 հա.-ի համար՝ 1.000 դրամ, 1 հա-ից 10 հա-ի համար՝ 5.000 դրամ, 10 հա և ավելի դեպքում՝ 10.000 դրամ:

11. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0.3 գործակիցը:

Ավագանու անդամներ՝

	կողմ	դեմ	ձեռնպահ
Ա. Աբրահամյան			
Զ. Ամիրյան			
Ս. Եփրեմյան			
Ռ. Մեհրաբյան			
Ա. Սարգսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Եղեգնավան համայնք, փ. Ա. Խանջյան, 20, հեռ. /0234/ 62646, էլ. փոստ hovsep59@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<29>> նոյեմբերի 2011 թվականի N 10-Ն

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝

Կառավարման ապարատ գործարնական դասակարգման բաժնի /բաժին – 1, խումբ – 1, դաս – 1/ տնտեսագիտական դասակարգման

4234 հոդվածը ավելացնել 50.0 հազար դրամով, ճշտված պլանը սահմանել 50.0 հազար դրամ,
4239 հոդվածը պակասեցնել 12.2 հազար դրամով, ճշտված պլանը սահմանել 47.8 հազար դրամ,
4822 հոդվածը պակասեցնել 10.0 հազար դրամով, ճշտված պլանը սահմանել 0.0 հազար դրամ,
4823 հոդվածը ավելացնել 22.2 հազար դրամով, ճշտված պլանը սահմանել 22.2 հազար դրամ,

Հատկացումները կատարել վարչական բյուջեի պահուստային ֆորդի գործարնական դասակարգման բաժին – 11, խումբ – 1, դաս – 1 տնտեսական դասակարգման 4891 հոդվածից, ճշտված պլանը սահմանել 3127.6 հազար դրամ

Ավագանու անդամներ՝

	կողմ	դեմ	ձեռնպահ
Ա. Աբրահամյան			
Զ. Ամիրյան			
Ս. Եփրեմյան			
Ռ. Մեհրաբյան			
Ա. Սարգսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՂԱԶԱՐՅԱՆ